

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 42/16

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու գործողության դեմ «Արտեքս-91» ՍՊԸ դիմում-բողոքը.

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Բողոքաբերը հայտնում է, որ «Արտեքս-91» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) հաշվեկշռում առկա է անշարժ գույք, որը լուծարման պատճառով վերջինս չի կարողանում տնօրինել:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է վերականգնել «Արտեքս-91» ՍՊԸ-ի կարգավիճակը կամ տալ համապատասխան տեղեկանք՝ անշարժ գույքը տնօրինելու համար:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Արտեքս-91» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 19.11.2002թ.:

Ընկերությունը, համաձայն «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի պահանջների, լուծարվել է:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է ք.Երևան, Տիգրան Մեծի 23 հասցեում գտնվող N 23 շինությունը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

«2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպությունների (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին չեն ներկայացրել որևէ հաշվետվություն, հաշվարկ կամ հայտարարագիր (այսուհետ՝ հաշվետվություն) և հարկային մարմնում առկա փաստաթղթերի համաձայն չունեն գույք ու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ կամ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն չեն

վերագրանցվել, չունեն գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ»:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն օրենքի 1-ին հոդվածում նշված հարկ վճարողների ցանկը և հարկային մարմնի կողմից վերահսկվող պարտավորությունների բացակայության մասին տեղեկանքը հարկային մարմինը մինչև 2011 թվականի հուլիսի 15-ը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ պետական ռեգիստր)»:

Քննարկվող դեպքում, Օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին բավարարող հարկ վճարողների ցանկը, որում ընդգրկվել են նաև «Առաքելյանների ընտանիք» ՓԲԸ-ի վերաբերյալ տվյալները, հարկային մարմնի կողմից ներառվել են լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում և ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, որի հետևանքով Ընկերությունը սահմանված կարգով լուծարվել է:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ հարկային մարմնի գործողությունները՝ կապված Ընկերության վերաբերյալ տվյալները վերագրյալ ցանկում ներառելու և ՀՀ պետական ռեգիստր ներկայացվելու հետ, եղել են ոչ իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում Ընկերության վերաբերյալ տվյալները համապատասխան ցանկում ընդգրկվելու և պետական ռեգիստր ներկայացվելու դրությամբ «Արտեքս-91» ՍՊԸ-ն ունեցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք:

Վերագրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ Ընկերությունը, ըստ էության, չի բավարարել Օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին, հետևապես նաև «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքով սահմանված ցանկում Ընկերության վերաբերյալ տվյալները չպետք է ընդգրկվեն:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Արտեքս-91» ՍՊԸ-ն դիմում-բողոքը բավարարել և ոչ իրավաչափ ճանաչել «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի համաձայն հարկային մարմնի կողմից «Արտեքս-91» ՍՊԸ-ի լուծարման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառելու գործողությունը:

2. «Արտեքս-91» ՍՊԸ-ն համարել «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2011թ. հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի համաձայն լուծարվող հարկ վճարողների ցանկում ներառելու ոչ ենթակա:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.Մաշադյան